

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Դ Ե Պ Ք

Բարեբար զինոր ղ :

Քանի մը ամիս կայ որ դաղը կացի զինուոր մը ճամբուն վրայ տասնհինգ տարեկան տղու մը կը հանդիպի, որ վրան գլուխը պատուտած, և ուտելու հաց չունենալով ստակ կը մուրար : Զինուորը կը խղճայ տղուն վրայ, կը սկսի հեռու խօսիլ ու այլ և այլ հարցմունքներ ընել : Կ'իմանայ որ երկայն ատենէ 'ի վեր ծնողացը երեսէն ընկեր է, ուտեղ մը չունի որ հոն կենայ, բոլոր օրը մուրալով կ'անցընէ, ու երկու ստակ ձեռք ձգելէն ետքը կ'երթայ իրիկունները փողոցի մը անկիւնը կը քնանայ ուրիշ մուրացիկներու քով : — Ուրիշ մը ըլլար նէ՛ ս' գիտէ ինչպէս կը վաւերաբար քովէն ան մուրացիկան տղան, կամ թէ շատ շատ՝ երկու իրեք փող կուտար ձեռքը ու կը ճամբէր : Բայց ան զինուորը լաւ կը ճանչնայ եղեր իր քրիստոնէական պարտքերը : սիրտը կը շարժի, կը գծայ աւելի ան խեղճին հոգւոյն վրայ՝ քան թէ մարմնոյն : Տղան կ'առնէ քովը, իր ամսական թոշակէն անոր ալ բաժին կը հանէ, ու բարեսիրտ պառաւի մը քով կը տեղաւորէ, որպէս զի տղան գէշ մարդկանց ընկերութենէն ազատի, ու անոնց անպիտան խօսքերը լսելով բոլորովին չաւրուի : Բանը նայէ որ տղան գատարկութե վարժած ըլլալով կը փախչի կ'երթայ նորէն մուրալու : Բայց զինուորը չուսահատիր : կ'երթայ կը փնտրուէ կը գտնէ տղան : Ինչ ընէ որ անիկայ նորէն չփախչի : Լսեր է եղեր թէ սրբոյն Վիլհելմին Պաւլայեցոյ ընկերութիւն կայ որ այսպիսի տղաք կը ժողովեն՝ կը կրթեն, մարդ կ'ընեն : անոնց կ'երթայ ու կ'աղաչէ որ օգնեն իրեն, ան տղան ազատեն իր խեղճութենէն : 800 Ֆրանք ալ կուտայ ընկերութեանը՝ որ յանձն առնէ ան տղան կրթելու : Խեղճ զինուորին ունեցածը չունեցածը աս 800 Ֆրանքն է եղեր : ան ալ ինչպէս ձեռք ձգեր է : Իր զինուորութեան կարգը լմնցընելէն ետքը՝ ան տղուն համար կ'երթայ նորէն զինուոր կը գրուի, ու կանխիկ կ'առնէ թուշակը : ան է եղեր տուածը :

Ընկերութիւնը տեսնելով զինուորի մը այսպիսի մեծ եռանդն ու սքանչելի ուղորմածութիւնը, սիրով յանձն առեր է անոր ազաւանքը, և առանց այնչափ ստակն ալ առնելու՝ ձեռք գրեր է տղուն վրայ : Հիմա երկու իրեք ամիս է որ տղան բոլորովին փոխուեր է, ու վրան մեծ յոյս կայ որ մարդ ըլլայ : Ան առաքինի զինուորին բարերարութիւնը աս միայն չէ : հապա շատ անգամ ուրիշ ընկերներուն տեղը ինքը պահապան կը կենայ, ու մէկուն մէկալին շատ ուղորմութիւն ալ կ'ընէ եղեր : Այսպիսի գեղեցիկ ու առաքինական գործքերը մեծ միջթարութիւն ու պատիւ են մեր ժամանակին : ուստի աս մեր օրագրիս մէջ իրաւամբ պէտք է պատմուին, ինչպէս որ կը ջանանք :

Քաղաքացիական Բանաստեղծը :

Հոսեցի 21<sup>ին</sup> անցեալ տարի մեռաւ Քաղաքացիական Բանաստեղծը 76 տարեկան : Ասիկայ կատարինէ Բ կայսրուհին օրերէն մնացած ետքի բանաստեղծն էր Ռուսաստանի մէջ, և հիմակուան խիստ երևելի ուսումնասիրողներէն մէկն էր : Տասնըվեց տարեկան ատենէն սկսաւ այլեայլ թատերական խաղեր շարագրել : բայց իր անունը անմահացընող գրուածքը իր առականներն են, որոնց մէկ քանին մենք ալ թարգմանաբար գրինք օրագրին մէջ ու պիտի գնենք ալ : Այնչափ է բնագրին մէջ Քաղաքացիական երգերուն բնականութիւնը, պարզութիւնը, ճիշտն ոճը, և միանգամայն զուարճախօսութիւնը՝ որ Գաղղիացոց լաֆոնթէն առակախօսին շատ կողմանէ կը հաւասարի, ու երբեմն անկէ ալ վեր կ'անցնի : Ռուսները մասնաւոր կերպով սեր ու համարում ունին իրեն առականներուն վրայ նաև անոր համար՝ որ անոնց մէջ ընդհանրապէս մեր գարուն և մանաւանդ իր հայրենակցաց պակասութիւնները սուր՝ բայց անոյշ կատակով մը գուրս կը հանէ ու կը խրատէ : Գրեթէ ամէն ուսումնական ուսուցիչներուց սորված է Քաղաքացիական Բանաստեղծը : ուստի շատ անգամ կը պատահէր որ կենցաղակցութեան մէջ իր առջևը իր առականը կը զուրցէին : Բայց որովհետև ինքը ամենապարզ մարդ էր, ու բանաստեղծական փառաց ծուխովը ոչ երբէք կը գինովուար, անոր համար պարզ ու անտարբեր կերպով մը կեցած մտիկ կ'ընէր իր առականը : և թէ որ մէկը զինքը առաջուց չճանչնար՝ անկարելի էր որ ան միջոցին իմանար թէ ան առականն հեղինակը ասիկայ է : Մէկ խօսքով՝ Քաղաքացիական Բանաստեղծը վրայ երբեմն երբեմն երկցած եզակի մարդիկներէն մէկն է : Իրեն առականներուն մէկ մասը թարգմանուած են նաև անգլիարէն, գերմաներէն ու գաղղիարէն : Բայց ասոնք բնագրին գեղեցկութիւնը չունին :

Ապոստոլական ընկերութիւն :

Այսօր 21<sup>ին</sup> մէջ կրնայ ըստել թէ ամէն բարեպաշտական գործքերէն վեր սեպուած է՝ ձրի Արտուածաշունչ բաժնիքը որ և իցէ ազգի ու մարդու : Աս բանիս փաստներուն վրայ խօսելու տեղը չէ հոս բայց թէ որչափ անպատուութեան պատճառ է անիկայ Արտուածաշունչին, հետագայ դիպուածէն ալ կ'իմացուի : — Մօտ ատեններս Ամերիկայի գատարներէն մէկուն առջևը տեղացի սեւերէն մէկը կը բերեն որ գատաստանի մը վկայ ըլլայ : Կըհարցընէ գատաւորը սեւին թէ « Կարդայ գիտես » : — « Բիչ մը, կ'ըսէ սեւ : — Ուրեմն աս գիրքը կը ճանչնաս » ըսելով գատաւորը աստուածաշունչ մը կը ցուցընէ սեւին որ վրան երդում ընէ : Անիկայ ալ ինչ պատասխան տայ : « Հաստ, կը ճանչնամ կ'ըսէ : Ես ամէն օր ասոր նման գրքի մը վրայ կը սրեմ իմ ածելիս » :